ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Հայաստան» խմբակցություն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածով և նկատի առնելով նույն օրենքի 64 և 153-րդ հոդվածներով տրվող կարգավորումները՝ կից ներկայացնում եմ «Հայաստան» խմբակցության որոշումը՝ «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին» Ազգային ժողովի որոշման նախագծին հավանություն տալու և Ազգային ժողովին ներկայացնելու մասին, ինչպես նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ հարցով հիմնական զեկուցող նշանակելու մասին (հիմնական զեկուցող է նշանակվել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանը):

Կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերը:

Հարգանքով՝

«Հայաստան»
խմբակցության քարտուղար
Ա. Մինասյան

09.02.2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

09.02.2022թ.

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և նկատի առնելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 64-րդ և 153-րդ հոդվածների կարգավորումները:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Ազգային ժողովին առաջարկել (ներկայացնել) «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծ:
2. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ հարցով հիմնական զեկուցող նշանակել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանին:

Խմբակցության քարտուղար՝ Ա.Մինասյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 64-րդ և 153-րդ հոդվածները, Ազգային ժողովը **որոշում է.**

«Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունների դադարեցման մասին» հարցը քննարկել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 153-րդ հոդվածով և 149-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝ որոշման նախագիծը ներկայացրած խմբակցության հիմնական զեկուցողից հետո, հարակից զեկուցմամբ հանդես է գալիս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2026 թվական, փետրվարի 10

Երևան

ԱԺՈ- -Լ